ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **21-ը փետրվարի 2025 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2025 թվականի փետրվարի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ: Բացակա էին՝ Լիանա Հովհաննիսյանը, Մարինա Հովեյանը, Սեդրակ Սահակյանը, Կարինե Հովհաննիսյանը, Արարատ Խաչատրյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Գագիկ Ոսկանյանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի ութերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

4) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի և Վաղաշեն բնակավայրի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 05-036-0737-0001 կադաստրային ծածկագրով համայնքային նշանակության փակուղուն հասցե տրամադրելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-085-0335-0066 կադաստրային ծածկագրով 0.5153 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-0543-0096, 05-027-1014-0009 և 08-027-0307-0018 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-027-2098-0011 կադաստրային ծածկագրով 2.0157 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Քարաձորի» անդեզիտաբազալտների հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ծրագրին նախնական համաձայնություն տալու մասին.

11) «Լիճք հանքային ջրերի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների իրականացման ծրագրին նախնական համաձայնություն տալու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն, Վարդենիկ, Ծովինար և Երանոս բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող բարդի տեսակի ծառերը հատելու համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 30-ի №222-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

14) 2020 թվականի 44-օրյա և 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմներում զոհված զինծառայողների՝ պատերազմից հետո երեխա ունեցած մայրերին միանվագ գումար տրամադրելու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակիչներին դրամական հատուցումներ տրամադրելու մասին.

16) «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում Մարտունի համայնքի լիազորված ներկայացուցիչ նշանակելու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մի խումբ բնակիչների համար փոխադրամիջոցների և անշարժ գույքերի հարկի գծով արտոնություններ սահմանելու մասին.

18) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Լուսինե Վարդանյանը և Համիկ Բաղդասարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունները և Մարտունի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերը (ավտոմեքենաները)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-4 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ՄՀԵՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Մեխակ Հակոբյանը և Հակոբ Վարդանյանը: Չի քվեարկել Հակոբ Բարոյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Տիգրան Հրաչիկի Ալեքսանյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Շահումյան փողոց, թիվ 87 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած ավտոտնակն օրինականացնելու համար.
   2) Արթուր Ռազմիկի Եղոյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 20 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած մառանն օրինականացնելու համար.
   3) Մարսել Մարտինի Արշակյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոց, թիվ 31/1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.
   4) Պետրոս Հրանտի Մանուկյանի կողմից Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 16 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն

հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

5) Լևոն Վահանի Խաչատրյանի կողմից Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Մեխակ Հակոբյանը և Հակոբ Վարդանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-036-0737-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշումը և Ծովասար բնակավայրի վարչական ղեկավարի 20.01.2025 թվականի №29 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 05-036-0737-0001 կադաստրային ծածկագրով համայնքային նշանակության փակուղուն տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 3-րդ փողոց, 6-րդ փակուղի հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Մեխակ Հակոբյանը և Հակոբ Վարդանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Հողամասերի պետական հաշվառման կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-085-0335-0066 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.5153 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-085-0335-0066 կադաստրային ծածկագրով 0.5153 հա մակերեսով գյուղատնտեսական

նպատակային նշանակության արոտավայրը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:

2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-027-0543-0096, 05-027-1014-0009 ԵՎ 08-027-0307-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-0543-0096 կադաստրային ծածկագրով 5.99 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 19000 (տասնինը հազար) ՀՀ դրամ:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-1014-0009 կադաստրային ծածկագրով 0.74585 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում

գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-0307-0018 կադաստրային ծածկագրով 0.2475 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-027-2098-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.0157 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-027-2098-0011 կադաստրային ծածկագրով 2.0157 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը 5 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Լուսինե Վարդանյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՔԱՐԱԾՈՐԻ» ԱՆԴԵԶԻՏԱԲԱԶԱԼՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի №1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Քարաձորի» անդեզիտաբազալտների հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ 1-ին հանրային քննարկման 21.01.2025 թվականի արձանագրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Նախնական համաձայնություն տալ «Յանա Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Քարաձորի» անդեզիտաբազալտների հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացման ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-17 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԼԻՃՔ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԼԻՃՔ ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի №1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը, «Լիճք հանքային ջրերի

գործարան» ՍՊԸ-ի կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների իրականացման վերաբերյալ 1-ին հանրային քննարկման 24.01.2025 թվականի արձանագրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Նախնական համաձայնություն տալ «Լիճք հանքային ջրերի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական տարածքի Ա-6 թաղամասի 23-րդ փողոցի թիվ 1/2 հասցեում նախատեսվող Լիճք ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության աշխատանքների իրականացման ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՎԱՐԴԵՆԻԿ, ԾՈՎԻՆԱՐ ԵՎ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲԱՐԴԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավարի 20.01.2025 թվականի №7, Վարդենիկ բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարողի 11.02.2025 թվականի №20, Ծովինար բնակավայրի վարչական ղեկավարի 11.12.2024 թվականի №289-24, Երանոս բնակավայրի վարչական ղեկավարի 10.02.2025 թվականի №20 գրությունները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի մշակույթի կենտրոնի շենքի հարևանությամբ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող 2 (երկու) բարդի տեսակի ծառերը, որոնց արմատները տարածվելով խարխլել են փողոցի սալիկապատ մակերեսը, ինչպես նաև խոչընդոտում են կոյուղագծի շահագործմանը.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի Կ. Շահինյան 2 և 4 հասցեներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող 9 (ինը) բարդի տեսակի ծառերը, որոնք վտանգ են ներկայացնում համայնքային ճանապարհի, ջրատար առուների համար, ինչպես նաև մեծ քանակությամբ որդեր ու լվիճներ են առաջանում, որոնք անհարմարություն են պատճառում հարևանությամբ ապրող բնակիչներին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի բնակիչ Վարդան Հայկարամի Ասոյանի հողամասի և համայնքային ճանապարհի եզրագծով շուրջ 70 մետր երկարության վրա գտնվող 14 (տասնչորս) բարդի տեսակի ծառերը, որոնք խոչընդոտում են էլեկտրահաղորդակցությանը և մալուխային գծերի բնականոն աշխատանքին.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի 4-րդ փողոցի 3-րդ նրբանցքով և 21-րդ փողոցի թիվ 14 հասցեի բնակելի տան մոտով անցնող ոռոգման առուների երկայնքով 1970-ական թվականներին տնկված 9 (ինը) բարդի տեսակի ծառերը, որոնք ծերացել և վտանգ են ներկայացնում հարակից շինությունների և հողամասերի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Օլգա Դավթյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-17 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի №222-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՇԱՀԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու և Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 11-ի №50-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №222-Լ որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը, Արա Գասպարյանը և Նաղաշ Հակոբյանը: Չի քվեարկել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Լ)*

ԼՍԵՑԻՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ 44-ՕՐՅԱ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՅՐԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՇԱՀԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջեից 2020 թվականի 44-օրյա և 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմներում զոհված զինծառայողների՝ պատերազմից հետո երեխա ունեցած մայրերին տրամադրել միանվագ 100000 (հարյուր հազար) դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետով նշված գումարի տրամադրման իրավունքը համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում վերապահել համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջեից ներքոնշյալ բնակիչներին հրդեհի կամ քամու հետևանքով պատճառված վնասները փոխհատուցելու նպատակով տրամադրել դրամական հատուցումներ՝

   1) Վաղաշեն բնակավայրի բնակիչ Վաղինակ Հայկազի Եղիազարյան - 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.

   2) Ծովինար բնակավայրի բնակիչ Արմենակ Համլետի Հովհաննիսյան - 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ.

   3) Արծվանիստ բնակավայրի բնակիչ Գուրգեն Արտաշեսի Մելքոնյան - 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ.

   4) Ծակքար բնակավայրի բնակիչ Սամվել Անուշավանի Գասպարյան- 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ.

   5) Լիճք բնակավայրի բնակիչ Շահեն Պարգևի Ղևոնդյան – 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ.

   6) Լիճք բնակավայրի բնակիչ Տարոն Լևոնի Աղաբեկյան – 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.

   7) Լիճք բնակավայրի բնակիչ Լևիկ Սալմանի Ավետիսյան – 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.

   8) Մարտունի քաղաքի բնակիչ Արտյոմ Վազգենի Մարտիրոսյան - 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 03.02.2025 թվականի թիվ 03/0203 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում որպես Մարտունի համայնքի լիազորված ներկայացուցիչ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Ազատի Հովեյանի թեկնածությունը՝ նրա կողմից այլ անձի վերալիազորելու իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏՅՈՄ ՔՈՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի և 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի բնակիչ Արտավազդ Միհրանի Վարդանյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված BMW X5 3.01 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 77AZ778, թողարկման տարեթիվը՝ 2001 թ., հզորությունը՝ 231 ձիաուժ, նույնականացման համարը՝ WBAFA53501LP22805) գույքահարկից կուտակված 313126 (երեք հարյուր տասներեք հազար հարյուր քսանվեց) դրամ ապառքի և 61376 (վաթսունմեկ հազար երեք հարյուր յոթանասունվեց) դրամ տույժի նկատմամբ:
2. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Դավիթ Զավենի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված MERCEDES BENZ E320 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 35FZ727, թողարկման տարեթիվը՝ 1997 թ., հզորությունը՝ 224 ձիաուժ) գույքահարկից կուտակված 70004 (յոթանասուն հազար չորս) դրամ տույժի նկատմամբ: Արտոնությունը կիրառել հարկատուի կողմից 141200 (հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր) դրամ ապառքը վճարելուց հետո:
3. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի բնակիչներ Շողիկ Աղվանի Սոլկարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված BMW528 I մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 71PO100, թողարկման տարեթիվը՝ 1998 թ., հզորությունը՝ 193 ձիաուժ) գույքահարկից կուտակված

167274 (հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր յոթանասունչորս) դրամ տույժի, Վաչագան Սոլկարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված WOLTSWAGEN VENTO 1.8 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 17OU722, թողարկման տարեթիվը՝ 1995 թ., հզորությունը՝ 90 ձիաուժ, նույնականացման համարը՝ WVWZZZ1HZSW339393) գույքահարկից կուտակված 22450 (քսաներկու հազար չորս հարյուր հիսուն) դրամ տույժի և Խաթուն Սոլկարյանի անվամբ հաշվառված անշարժ գույքերի հարկից կուտակված 16549 (տասնվեց հազար հինգ հարյուր քառասունինը) դրամ տույժի նկատմամբ:

4. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչներ Գագիկ Գրիշայի Թովմասյանին և Կարինե Սերյոժայի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Մարտունի քաղաքի Կամոյի փողոցի 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի հարկից կուտակված 462888 (չորս հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր ութսունութ) դրամ տույժի նկատմամբ: Արտոնությունը կիրառել հարկատուների կողմից 1988703 (մեկ միլիոն ինը հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր երեք) դրամ ապառքը վճարելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանել 2025 թվականի մարտի 28-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Մեխակ Հակոբյանը, Հակոբ Վարդանյանը և Արա Գասպարյանը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ՊԱՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ_____

ՀՅ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ * РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛЬНАЯ СЛУЖБА МАРТУНИ * RA GEGHARKUNIK REGION MARTUNI MUNICIPALITY

Նիստն արձանագրեց՝ Գագիկ Ոսկանյանը_____